

ԿԱՐԳ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ
ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ
ԱԶԱՏՄԱՆ

I ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են երեխայի (այսուհետ՝ սովորող) հանրակրթական ուսումնական հաստատություն (այսուհետ՝ դպրոց) ընդունելության, տեղափոխման և ազատման հետ կապված ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) և դպրոցի միջև ծագող իրավահարաբերությունները:
- II ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆԸ, ՏԵՂԱՓՈԽՈՒՄԸ
2. Սովորողի ընդունելությունը դպրոց իրականացվում է դպրոցի տնօրենի հրամանով՝ երեխայի (սովորողի) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) և դպրոցի միջև կնքված պայմանագրի հիման վրա:
3. Դպրոցի առաջին դասարան ընդունվում են այն երեխաները, որոնց վեց տարին լրացել կամ լրանում է մինչև տվյալ օրացուցային տարվա դեկտեմբերի 31-ը ներառյալ: Ավելի փոքր տարիքի երեխաների ընդունելությունը դպրոց արգելվում է:
- Ընդունելությունը դպրոց, որպես կանոն, կատարվում է երկու փուլով՝ տվյալ տարվա հունիսի 1-ից մինչև 20-ը և օգոստոսի 18-ից մինչև 31-ը:
- Հանրակրթությունից դուրս մնացած, այլ երկրներից վերադարձած, որևէ պատճառով ուսումն ընդհատած, ապա շարունակել ցանկացող սովորողները դպրոց են ընդունվում ամբողջ տարվա ընթացքում. պահպանելով սույն կարգի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 23-րդ կետերի պահանջները:
4. Մինչև 16 տարին լրանալը, սովորողի կողմից հիմնական ընդհանուր կրթություն ստանալու իրավունքը չապահովելու համար պատասխանատու է ծնողը (նրա օրինական ներկայացուցիչը)՝ օրենքով սահմանված կարգով:
5. Սահմանված ժամկետից ուշ երեխան դպրոց ընդունվում է.
- ա) մինչև 2 տարի ուշացման դեպքում՝ առաջին դասարան՝ ընդհանուր հիմունքներով,
բ) 2 տարուց ավելի ուշացման դեպքում (մինչև 13 տարին լրանալը)՝ իր տարիքային խմբին համապատասխան դասարան, կամ ծնողի առաջարկությամբ՝ մեկ կամ երկու դասարան ցածր՝ առարկայական մասնագիտական խմբի եզրակացության հիման վրա:
6. 13-ից մինչև 15 տարեկան, կրթական 2-րդ աստիճանում դպրոց չհաճախած կամ մինչև երկու տարի ուսումն ընդհատած երեխաներն ընդունվում են իրենց տարիքային խմբից մեկ կամ երկու դասարան ցածր՝ առարկայական մասնագիտական խմբի եզրակացության հիման վրա:
7. 15-16 տարեկան, կրթական երրորդ աստիճանում դպրոց չհաճախած կամ երրորդ աստիճանի որևէ մակարդակում ուսումն ընդհատած երեխաները, հիմնական կրթության վկայական ներկայացնելու դեպքում ընդունվում են իրենց տարիքային խմբից մեկ դասարան ցածր, հիմնական կրթության վկայական չներկայացնելու դեպքում՝ 9-րդ (ավարտական) դասարան:
8. Սույն կարգի 5-րդ կետի բ) ենթակետի և 6-րդ կետի պահանջների կատարումն ապահովելու նպատակով տնօրենի հրամանով ստեղծվում է առարկայական մասնագետների խումբ (այսուհետ՝ մասնագիտական խումբ):

Հիմք ընդունելով մասնագիտական խմբի եզրակացությունը՝ սովորողի փաստացի առարկայական գիտելիքների մասին, տնօրենն ընդունում է սովորողին համապատասխան դասարան, հաստատում է ուսումնական պլանով նախատեսված առարկաներից մեթոդիավորումների կողմից ներկայացված անհատական ուսուցման ծրագրերը, լրացուցիչ դասընթացների ժամանակացույցը և սովորողի համար կազմակերպում է անհատական ուսուցում՝ նախարարության կողմից սահմանված կարգի համաձայն:

9. 16 տարեկանից բարձր տարիքի դպրոց չհաճախած կամ կրթական որևէ մակարդակում ուսումնական ընդհատած երեխաները հանրակրթական ծրագրերը կարող են յուրացնել ինքնակրթությամբ և էքստեռն (դրսեկության ձևով) կարգով ստանալ հիմնական կրթության վկայական և (կամ) միջնակարգ կրթության ատեստատ:

10. Պետական դպրոցի տնօրենը պարտավոր է տվյալ վարչական տարածքում (համայնքում) բնակվող երեխաներին (սովորողներին), ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) կողմից դիմում ներկայացնելու դեպքում, ընդունել դպրոց՝ ապահովելով ՀՀ օրենսդրությամբ սահմանված նորմերին համապատասխան պայմաններ:

11. Դպրոց ընդունելության ժամանակ սովորողի գիտելիքների ստուգում չի թույլատրվում, բացառությամբ սույն կարգի 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված դեպքերի:

12. Մասնագիտացված կրթական ծրագրեր իրականացնող հաստատությունում ընդունելությունը կատարվում է տվյալ հաստատության կանոնադրության համաձայն՝ պահպանելով սույն կարգի պահանջները:

13. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների կրթությունը իրենց զարգացման առանձնահատկություններին և տարիքին համապատասխան՝ ծնողի ցանկությամբ, կարող է կազմակերպվել հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունում:

14. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը ճանաչելու նպատակով երեխան ներկայացվում է բժշկահոգեբանամանկավարժական գնահատման.

ա) ծնողների (նրա օրինական ներկայացուցիչների) դիմումի հիման վրա՝ իր նախաձեռնությամբ կամ

բ) կրթության, առողջապահության և սոցիալական ապահովության համակարգի իրավասու մարմինների և հասարակական կազմակերպությունների առաջարկով,

գ) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած որոշման հիման վրա:

15. Բժշկահոգեբանամանկավարժական գնահատման իրականացվում է Երևանի բժշկահոգեբանամանկավարժական գնահատման կենտրոնի կողմից ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) մասնակցությամբ:

16. Բժշկահոգեբանամանկավարժական կենտրոնի գնահատման արդյունքների վերաբերյալ եզրակացության հիման վրա տարածքային կառավարման պետական մարմինը (Երևանում՝ Երևանի քաղաքապետարանը) վկայագրում է երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքը:

17. Երեխայի կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ վկայագրում (ՀՀ ԿԳ նախարարի 11.11.2009թ. N927-Ն հրամանով հաստատված ձև) նշված կարիքի հիման վրա երեխան ընդունվում է հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն:

18. Կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի տեսակից ելնելով՝ երեխան կարող է ընդունվել *միայն* համապատասխան տիպի հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն՝

ա) խոսքի ծանր խանգարումներ, հնչյունահնչույթային և խոսքի ընդհանուր թերզարգացում ունեցող երեխաները՝ «խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ:

բ) լսողության խանգարում՝ ջլսող (խույ), թույլ լսող և լսողության կորուստ ունեցող երեխաները՝ «Լսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ:

գ) տեսողության խանգարում՝ կույր, թույլ տեսնող, ուշ կուրացած երեխաները «Տեսողության խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ:

դ) մտավոր հետամնացություն ունեցող երեխաները՝ «Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ և «Հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ:

ե) հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաները՝ «Հենաշարժական համակարգի խախտումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ:

զ) հոգեբանական զարգացման խնդիրներ՝ ուսումնական ունակությունների զարգացման յուրահատուկ խանգարումներ ունեցող երեխաները՝ «խոսքի ծանր խանգարումներ ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ:

է) վարքային և հուզականային ոլորտի խանգարումներ ունեցող երեխաները (առտիզմ և մտավոր հետամնացություն ունեցող)՝ «Մտավոր թերզարգացում ունեցող երեխաների հատուկ (օժանդակ) հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ:

19. Հակասոցիալական վարք ունեցող երեխաները կարող են ընդունվել «Հակասոցիալական վարք ունեցող երեխաների հատուկ հանրակրթական ուսումնական հաստատություն» ՊՈԱԿ:

20. Հատուկ հանրակրթական ուսումնական հաստատությունից հանրակրթական ընդհանուր ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություն սովորողի տեղափոխումը կատարվում է ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) դիմումի համաձայն՝ պահպանելով սույն կարգի 23-րդ կետի պահանջները:

21. Ազգային փոքրամասնությանը պատկանող քաղաքացիների երեխաների ընդունելությունը դպրոց կատարվում է երեխայի ազգային (մայրենի) լեզվով ուսուցմամբ կամ այդ լեզվի դասընթաց ունեցող դպրոցում /դասարանում/, իսկ դրա բացակայության դեպքում՝ ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են երեխաների (սովորողների) ծնողները:

22. Օտարերկրյա քաղաքացիների, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն չունեցող, երկքաղաքացի անձանց, ինչպես նաև այն դեպքում, երբ ծնողներից մեկը Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, իսկ մյուսը՝ օտարերկրացի, երեխաների ուսուցման լեզվի ընտրությունը կատարում են երեխաների ծնողները (նրանց օրինական ներկայացուցիչը) անկախ ազգային պատկանելությունից:

23. Երեխային (սովորողին) դպրոց ընդունելու համար ծնողը դպրոց է ներկայացնում՝

- 1) դիմում, իսկ առաջին դասարան ընդունվելիս նաև բնակչության պետական ռեգիստրում հաշվառված լինելու մասին տեղեկանք,
- 2) 2 լուսանկար 3x4 չափսի,
- 3) առաջին դասարան ընդունվելիս ներկայացվում է ծննդյան վկայականի կամ անձնագրի բնօրինակը և պատճենը: Տնօրենի <<իսկականի հետ ճիշտ է>> մակագրությամբ պատճենը պահվում է սովորողի անձնական գործում,
- 4) սովորողի անձնական գործը (առաջինից բարձր դասարաններ ընդունվելիս,)

5) տեղեկանք ընթացիկ գնահատականների մասին, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների դեպքում նաև անհատական ուսուցման պլանը,

6) վկայագիր՝ «կրթության առանձնահատուկ պայմանների կարիքի վերաբերյալ» տրված տարածքային կառավարման պետական մարմնի կողմից, կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաներին հատուկ դպրոց ընդունելու համար,

7) տեղեկանք՝ «Կյանքի դժվարին իրավիճակում գտնվող երեխաների տեղեկատվական համակարգում» հաշվառված լինելու վերաբերյալ՝ տրված տարածքային կառավարման պետական մարմնի կողմից, հակասոցիալական վարք դրսևորած երեխաներին համապատասխան դպրոց ընդունելու համար (չորրորդ դասարանից սկսած),

8) դպրոցից դպրոց տեղափոխվելիս՝ սովորողի տեղափոխման թերթիկը (բացառությամբ մինչև տվյալ տարվա սեպտեմբերի 1-ը հիմնական դպրոցից առանձին գործող ավագ դպրոցի 10-րդ դասարան ընդունվելիս):

24. Ընդհանուր ծրագրեր իրականացնող դպրոցից հատուկ ծրագրեր իրականացնող դպրոց կամ հատուկ ծրագրեր իրականացնող դպրոցից ընդհանուր ծրագրեր իրականացնող դպրոց սովորողի ընդունելությունը կատարվում է համաձայն սույն կարգի 23-րդ կետի, իսկ դասարանի համապատասխանությունը որոշվում է, ըստ ուսումնական ծրագրերի համարժեքության:

25. Ավագ դպրոց ընդունվելիս սովորողի ծնողը ներկայացնում է հիմնական կրթության վկայականի բնօրինակը և սույն կարգի 23-րդ կետով պահանջվող փաստաթղթերը, բացառությամբ «Անձնական գործ» գրքուկի:

26. Սովորողի ընդունելությունը կամ տեղափոխումը նոր դպրոց՝ ենթակա է պարտադիր հաշվառման՝ մեկ ամսվա ընթացքում:

Հաշվառման ներկայացման պատասխանատուն ընդունող դպրոցի տնօրենն է:

Տնօրենը, ամբողջ ուսումնական տարվա ընթացքում, յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ լիազոր մարմնին է ներկայացնում դպրոց ընդունված սովորողների անվանացանկը: Լիազոր մարմնի աշխատակազմի կրթության ստորաբաժանման աշխատակիցը 2-օրյա ժամկետում իրականացնում է սովորողի հաշվառումը հատուկ մատյանում (հնարավոր է նաև էլեկտրոնային մատյանի տարբերակը), անվանացանկի վրա կատարում է նշում՝ «Հաշվառված է» և ստորագրում է: Մակագրված անվանացանկը պահպանվում է ընդունող դպրոցում:

27. Այլ երկրներից Հայաստանի Հանրապետություն վերադարձած սովորողի ընդունելությունը դպրոց կատարվում է՝

1) կրթության վերաբերյալ համապատասխան փաստաթղթերի բացակայության դեպքում՝

ա) միջնակարգ կրթության 1-ին, 2-րդ և 3-րդ (հիմնական կրթության վկայականի առկայության դեպքում) սույն կարգի 6-րդ, 7-րդ, 8-րդ և 9-րդ կետերի պահանջներին համապատասխան,

բ) Հիմնական կրթության վկայական չներկայացնելու դեպքում՝ միջնակարգ կրթության 3-րդ աստիճանում ուսումնառությունը չի կարող շարունակվել:

2) Համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում՝ տասնմեկամյա ծրագրով ուսուցումը ընդհատած սովորողը 1-ին և 2-րդ կրթական աստիճաններում ուսումը շարունակում է համապատասխան դասարանում, իսկ կրթական 3-րդ աստիճանում՝ մեկ դասարան բարձր:

3) տասներկամյա ծրագրով ուսուցումն ընդհատած սովորողը կրթական բոլոր աստիճաններում ուսումը շարունակում է համապատասխան դասարանում:

28. Ոստմնական տարվա ընթացքում մինչև 200 ժամ ուսումն ընդհատած ապա վերադարձած (ինչպես նաև այլ երկրներից վերադարձած) սովորողը, որն այդ ընթացքում չի սովորել կամ չի ներկայացրել ընթացիկ գնահատականների մասին տեղեկանք, ընդունվում է իր տարիքային խմբին համապատասխան դասարան, լրացուցիչ պարապմունքների միջոցով լրացնում է բաց թողնված ծրագրային նյութերը և մանկավարժական խորհրդի որոշմամբ առնվազն 5 առարկաներից հանձնում է քննություններ, ուսումնական պլանով նախատեսված մյուս առարկաներից՝ ամփոփիչ ստուգողական աշխատանքներ: Դրական արդյունքների դեպքում սովորողը փոխադրվում է հաջորդ դասարան:

29. Միջին մասնագիտական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններից դպրոց սովորողի ընդունելությունը կատարվում է ամբողջ տարվա ընթացքում՝ համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում՝

1) բաց թողածը լրացնելու պայմանով,

2) 1-ին կուրսից՝ 10-րդ դասարան, 2-րդ կուրսից՝ 11-րդ դասարան, 3-րդ և 4-րդ կուրսերից՝ 12-րդ դասարան:

30. 1-ին և 2-րդ դասարանները այլ երկրներում ռուսերենով /կամ այլ օտար լեզվով/ ուսուցմամբ դպրոցներում /դասարանում/ սովորած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների երեխաները Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս ուսումը շարունակում են հայերենով ուսուցմամբ համապատասխան դասարանում:

31. Ուսումնառության ընթացքում առնվազն 5 տարի անընդմեջ այլ երկրներում ռուսերենով /կամ այլ օտար լեզվով/ ուսուցմամբ դպրոցներում /դասարանում/ սովորած Հայաստանի Հանրապետության քաղաքացիների երեխաները Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս կարող են ուսումը շարունակել ռուսերենով /կամ այլ օտար լեզվով/ ուսուցմամբ համապատասխան դասարաններում:

32. Մնացած դեպքերում այլ երկրներում ռուսերենով /կամ այլ օտար լեզվով/ ուսուցմամբ դպրոցներում /դասարանում/ սովորած Հայաստանի Հանրապետություն քաղաքացիների երեխաները ուսումնական տարվա առաջին կիսամյակում Հայաստանի Հանրապետություն վերադառնալիս կարող են մինչև ուսումնական տարվա ավարտը, իսկ երկրորդ կիսամյակում՝ մինչև հաջորդ ուսումնական տարվա ավարտը սովորել ռուսերենով /կամ այլ օտար լեզվով/ ուսուցմամբ դասարանում՝ այդ ընթացքում հայերենի իմացությունը ապահովելու և սահմանված ժամկետը լրանալուց հետո հայերենով ուսուցմամբ դասարան տեղափոխվելու պայմանով:

III ՍՈՎՈՐՈՂԻ ԱԶՍՈՒՄԸ ԴՊՐՈՑԻՑ

33. Սովորողի ազատումը դպրոցից կատարվում է.

1) ծնողի դիմումի հիման վրա,

2) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի հիման վրա:

3) Առանց դիմումի դպրոցից հեռացած սովորողը չի փոխադրվում հաջորդ դասարան և ուսումնական տարվա վերջում հանվում է հաշվառումից:

34. Ոչ պետական, մասնագիտացված դպրոցների կամ այլընտրանքային ծրագրում ընդգրկված սովորողների ազատումը կամ այլ դպրոց տեղափոխումը կարող է կատարվել նաև ծնողի և տվյալ դպրոցի միջև կնքված պայմանագրային դրույթները սովորողի կամ ծնողի կողմից չպահպանելու դեպքում:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԿՐԹԱԿԱՆ ՌԻՍՏՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՎՈՐՈՂԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ, ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԵՎ ԱՋԱՏՄԱՆ ԿԱՐԳԻ» ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ (ԱՅՍՈՒՀԵՏԵՎ՝ ԿԱՐԳ)

1. Հայաստանի Հանրապետությունում սովորողների ընդունման և տեղափոխման միասնական փաստաթղթաշրջանառություն վարելու և մինչ այս տարբեր «թերթիկներ, ձևեր, տեղեկանքեր» կիրառելուց խուսափելու նպատակով խիստ անհրաժեշտություն է, որպեսզի սույն կարգով, որպես հավելված, հաստատվի նաև «Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի տեղափոխման տեղեկանք», «Հանրակրթական ուսումնական հաստատության սովորողի ընդունելության տեղեկանք» ձևերը, ինչպես նաև տրվի դրանց լրացման ցուցումները:
2. Կարգում տրված չէ սովորողի առանձին գործող տարրական դպրոցն ավարտելու և առանձին գործող դպրոցի /միջին, հիմնական, միջնակարգ/ 5-րդ դասարան /կրթական 2-րդ աստիճանի առաջին մակարդակ/ ընդունվելու պայմանները:
3. Կարգում տրված չէ սովորողի հիմնական դպրոցն ավարտելու և նույն դպրոցի 10-րդ դասարան /կրթական 3-րդ աստիճանի առաջին մակարդակ/ ընդունվելու պայմանները:
4. Կարգում տրված չէ դպրոցի և ծնողի միջև կնքվող կրթական ծառայությունների մատուցման մասին պայմանագրի կնքման և լուծման պայմանները: Նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ պայմանագիրը կնքում է հիմնականում երեխայի ծնողներից մեկը՝ հայրը կամ մայրը, իսկ շատ հաճախ տարբեր պատճառներով անհրաժեշտ է լինում երեխայի անձնական գործերը վերցնել պայմանագիրը կնքած ծնողի բացակայության դեպքում, առաջացնելով պայմանագրի լուծման պայմանի խախտում, ուստի անհրաժեշտ է կարգով այն կարգավորել:
5. Կարգում տրված չէ կրթական 2-րդ և 3-րդ աստիճանի ուսումնառության ավարտին համապատասխան ավարտական փաստաթղթի ստացումից հետո սովորողի ազատման կարգը:
6. Նկատի ունենալով, որ կարգը անդրադառնում է նաև հաստատությունից սովորողների տեղափոխմանը և ազատմանը, ուստի վերնագրում պետք է՝ կատարել փոփոխություն, որովհետև եթե հանենք <<Ընդունելության>> բառը ապա կստացվի <<... հաստատություն սովորողի տեղափոխման և ազատման կարգ>>, որը շարահյուսական սխալ ձևակերպում է: Առաջարկվում է <<Ընդունելության>> բառից հետո լրացնել <<և հաստատությունից>> բառը (հանելով կետադրական նշանը): Համապատասխան փոփոխությունը (կամ լրացումը) կատարել նաև Կարգի 1-ին կետում և նկատի ունենալով, որ Կարգը վերաբերվում է դպրոցահասակ երեխային, ուստի առաջարկվում է նաև Կարգի 1-ին կետում <<Կարգավորվում են>> բառերից հետո լրացնել <<դպրոցահասակ>> բառով:
7. Կարգի 1-ին կետի նախադասության մեջ «կապված ծնողի» բառերի միջև առաջարկվում է լրացնել «սովորողի» բառով:

8. Կարգի «Սովորողի ընդունելությունը, տեղափոխումը» բաժնի վերնագիրը ցանկայի է ոչ թե ստորակետով առանձացվի, այլ՝«և»-ով. /«Սովորողի ընդունելությունը և տեղափոխումը»/:
9. Կարգի մի շարք կետերում (2-րդ, 21-րդ և 23-րդ) փակագծերով կրկին տրվում է «երեխայի (սովորողի)» բացահայտյալը, այն դեպքում, երբ Կարգի 1-ին կետում այն արդեն տրված է:
10. Կարգի 2-րդ կետի «Սովորողի ընդունելությունը դպրոց իրականացվում է դպրոցի տնօրենի հրամանով՝ երեխայի (սովորողի) ծնողի (նրա օրինական ներկայացուցչի) և դպրոցի միջև կնքված պայմանագրի հիման վրա» նախադասությունը առաջարկվում է շարադրել «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն:
Նկատի ունենալով, որ Կարգի 3-րդ կետը վերաբերվում է 1-ին դասարան ընդունվողներին (որը ցանկայի կլինե՞ր առանձին կետով գրվե՞ր, որպեսզի վերաբերվե՞ր նաև առաջինից բարձր դասարանների երեխաներին), իսկ հիմնական կրթությունը պարտադիր է, ուստի առաջարկվում է Կարգի 3-րդ կետից հանել << ապա շարունակել ցանկացող>> բառերը:
11. Կարգի 3-րդ կետում «Հանրակրթությունից դուրս մնացած, այլ երկրներից վերադարձած, որևէ պատճառով ուսումն ընդհատած, ապա շարունակել ցանկացող սովորողները դպրոց են ընդունվում ամբողջ տարվա ընթացքում» նախադասության մեջ հարկ է լրացնել նաև «այլ ուսումնական հաստատությունից տեղափոխված» բառերը:
12. Կարգում դասարանի աստիճանը հաճախ նշվում է տառերով, հաճախ՝ արաբական թվով: Օրինակ. «Առաջին դասարան», «1-ին դասարան»:
13. Կարգի 5-րդ կետի «բ» ենթակետում «Սահմանված ժամկետից ուշ երեխան դպրոց ընդունվում է. <<2 տարուց ավելի ուշացման դեպքում (մինչև 13 տարին լրանալը)՝ իր տարիքային խմբին համապատասխան դասարան, կամ ծնողի առաջարկությամբ՝ մեկ կամ երկու դասարան ցածր՝ առարկայական մասնագիտական խմբի եզրակացության հիման վրա» ձևակերպման մեջ անհասկանալի է, թե իր տարիքային խմբին համապատասխան դասարան կարող է արդյոք առարկայական մասնագիտական խմբի եզրակացության հիման վրա ընդունվել, թե դա վերաբերվում է ցածր դասարան ընդունվելուն:
14. Կարգի 7-րդ կետում <<ցածր>> բառից հետո առաջարկվում է հանել ստորակետը և լրացնել <<իսկ>> բառով:
15. Կարգի 8-րդ կետում նշված <<նախարարություն>> բառը բնականաբար հասկանալի է, որ վերաբերվում է Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությանը, սակայն իրավական ակտում այն պետք է նախապես նշված լինե՞ր, որպեսզի հետագայում կիրառվե՞ր կրճատ՝ <<նախարարություն>> բառը:
16. Կարգի 9-րդ կետը առաջարկվում շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «16 տարեկանից բարձր տարիքի դպրոց չհաճախած կամ կրթական որևէ մակարդակում ուսումն ընդհատած երեխաները հանրակրթական ծրագրերը կարող են յուրացնել ինքնակրթությամբ և էքստենս կարգով հանձնել քննություններ ու ստանալ համապատասխան ավարտական փաստաթուղթ՝ հիմնական կրթության վկայական կամ միջնակարգ կրթության ատեստատ»:
17. Կարգի 14-րդ կետի «ա» ենթակետում ավելորդ է «կամ» շաղկապը:
18. Կարգի 15-րդ կետում <<բժշկահոգեբանամանակավարժական>> բառից առաջ առաջարկվում է լրացնել <<երեխայի>> բառով:

19. Կարգի 22-րդ կետում «<օտարերկարացի>> բառը փոխարինել «այլ պետության քաղաքացի» բառերով, որովհետև ծնողը կարող է օտարերկրացի լինել, բայց ունենալ Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն:
20. Կարգի 23-րդ կետի 1-ին ենթակետում «դիմում» բառից հետո առաջարկվում է լրացնել «<տնօրենի անունով>» բառերը:
21. Նախադասությունը առավել բարեհունչ դարձնելու անհրաժեշտությունից ելնելով առաջարկվում է Կարգի 23-րդ կետի 3-րդ ենթակետի շարադրանքը ընդգրկել նույն կետի 1-ին ենթակետում, իսկ 8-րդ ենթակետում «<սովորողի տեղափոխման թերթիկը>> բառերը գրել «<դպրոցից դպրոց տեղափոխվելիս>> բառերից առաջ:
22. Կարգի 26-րդ կետից առաջարկվում է հանել «<անվանացանկի վրա կատարում է նշում՝ «Հաշվառված է»>» և ստորագրվում է: Մակագրված անվանացանկը պահպանվում է ընդունող դպրոցում» բառերը, որովհետև մարզպետարաններում էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության պարագայում այդ կերպ հաշվառում կազմակերպելը լրացուցիչ դժվարություն է ստեղծելու և բացի դրանից ժամկետի պահպանման առումով խախտումը երկկողմանի թաքցնելու հնարավորություն է ընձեռում:
23. Կարգի 27-րդ կետի «<ա>> ենթակետում «<3-րդ>> թվից հետո լրացնել «<աստիճանում>>» բառով: Առհասարակ 27-րդ կետում անհրաժեշտ է շարադրել նոր խմբագրությամբ, որովհետև առանձին ենթակետում տրված մեկնաբանությունը շարահյուսության տեսանկյունից չի համապատասխանում տվյալ կետով առաջադրված պայմանին:
24. Կարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետում օրենսդրորեն հասկանալի չէ, թե ինչ է նշանակում «դպրոցից հեռացած սովորող» և «հանել հաշվառումից» արտահայտությունը: Եթե սովորողը օրենսդրությամբ սահմանված կարգով տարիքը չլրանալու դեպքում չստանալով հիմնական կրթություն հեռացել է դպրոցից, ապա պետք է միջոցներ ձեռնարկել նրան դպրոց բերելու ուղղությամբ, իսկ եթե ընդունվել է մեկ այլ դպրոց, ապա ոչ ոք իրավունք չունի նրան առանց համապատասխան փաստաթղթերի ընդունելու մեկ այլ դպրոց: Եթե սահմանված տարիքը լրացել է, և սովորողը առանց ծնողի դիմում կամ պայմանագիրը լուծելու թողել է դպրոցը ուստի պետք է դասդեկի կամ այլ մարմինների միջոցով պարզել նրա բացակայության կամ դպրոցը թողնելու պատճառը և միայն դրանից հետո միակողմանիորեն լուծելով պայմանագիրը՝ ազատել դպրոցից:
- Այսպիսով՝ Կարգի 33-րդ կետի 3-րդ ենթակետը առաջարկվում է շարադրել նոր՝ առանձին 34-րդ կետով հետևյալ խմբագրությամբ՝ «<34. Առանց սովորողի ծնողի դիմումի և առանց պայմանագիրը օրենքով սահմանված կարգով լուծելու հիմքով ուսումնական տարվա ընթացքում դպրոցը թողած (առնվազն մեկ ամիս դպրոց անհարգելի չհաճախած) և տվյալ դպրոցում ուսումը չշարունակել ցանկացող սովորողի բացակայության և դպրոց չհաճախելու պատճառները պարզաբանելուց հետո դպրոցի տնօրենը միակողմանիորեն լուծում է սովորողի ծնողի հետ կնքած պայմանագիրը և սովորողին ազատում դպրոցից: Այս հիմքով ազատված սովորողը, անկախ դպրոցը թողնելու ժամանակահատվածից, նախկին դպրոցում չի փոխադրվում հաջորդ դասարան»>>: